



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱԿ

Հ Ր Ա Մ Ա Ն

«05» ապրիլի 2018թ.

N 43-2h

ՀՀԿ 23-101-2017 «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱԿԱՎԱՇԱՐԺ ԽՄԲԵՐԻ ԵՎ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԶԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ
ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10¹-րդ, 16-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N1111 -Ն որոշման N 1 հավելվածի 15-րդ կետի 4-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

Հավանություն տալ «ՀՀԿ 23-101-2017 «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին»՝ համաձայն հավելվածի:

05 ապրիլի 2018թ.
ք. Երևան

Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հավանություն է տրվել
ՀՀ ԿԱ քաղաքաշինության
պետական կոմիտեի նախագահի
2018 թվականի ապրիլի 5-ի N 43 - Ա հրամանով

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱԿՎԱԿԱԶԱՐԺ ԽՄԲԵՐԻ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ
ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՐՈՎՄԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ
ՀԱՎԱՔԱԾՈՒ
ՀՀԿՀ 23-101-2017**

Գործարկման թվականը

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածու» կանոնների հավաքածուն (այսուհետ՝ կանոնների հավաքածու/ կարգավորում է հաշմանդամություն ունեցող անձանց համար բնակելի, հասարակական, արտադրական և այլ գործառական նշանակության մատչելի շենքերի և շինությունների հատակագծային տարրերի, այդ թվում՝ մուտքային հանգույցների, հաղորդակցությունների, տարահանման ուղիների, բնակելի, սպասարկման և աշխատատեղերի սենքերի (գոտիների) նախագծային լուծումներն ու հաշվարկային բնութագրերը, ինչպես նաև գրաֆիկական կյուրերին ներկայացվող պահանջներն ու չափանիշերը:

2. Կանոնների հավաքածուն բովանդակում է հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքաշինական հարմարավետ միջավայրի ձևավորման, շենքերին ու շինություններին անարգել մոտեցման, շենքերի ներսում անարգել տեղաշարժման, տարածության մեջ կողմնորոշվելու, սարքավորումներից ու ծառայություններից օգտվելու (այդ թվում նաև ինքնասպասարկման), աշխատանքային և ուսումնական գործընթացներին մասնակցության և այլ պահանջների բավարարման ու կենսագործունեության միջավայրի հարմարավետության պայմանների ապահովման մանրամասերը՝ չսահմանափակելով բնակչության այլ խմբերի կենսագործունեության պայմանները և շենքերի շահագործման արդյունավետությունը:

3. Կանոնների հավաքածուն բովանդակում է հանձնարարելի դրույթներ ու պայմաններ, նախագծային լուծումների հնարավոր տարբերակներ՝ գոյություն ունեցող տարբեր գործառական նշանակության շենքերում ու շինություններում հաշմանդամություն ունեցող անձանց համար գործող նորմերով սահմանված պահանջներին համապատասխան քաղաքաշինական հարմարավետ միջավայր ձևավորելու համար:

4. Կանոնների հավաքածուի հիմնական մասը վերաբերում է բնակչության տեղաշարժվելու դժվարություն ունեցող խմբերի (այսուհետ՝ ԲՍԽ) համար հարմարավետ շենքերի և շինությունների նախագծմանը:

II. ՆՈՐՄԱՏԻՎ ՎԿԱՅԱԿՈՉՈՒՄՆԵՐ

5. Սույն կանոնների հավաքածույում վկայակոչված են հետևյալ նորմատիվ փաստաթղթերը.

- 1) ՀՀՇՆ IV-11.07.01-2006 Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար,
- 2) IV-11.03.01-2004 Արտադրական շենքեր,
- 3) IV-11.03.03-2002 Ավտոկայանատեղեր,
- 4) ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն,
- 5) ՀՀՇՆ 31-01-2014 Բնակելի շենքեր. Մաս I. Բազմաբնակարան բնակելի շենքեր,
- 6) ՀՀՇՆ 30-01-2014 Քաղաքաշինություն, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում,
- 7) ՀՀՇՆ 22-03-2017 Արհեստական և բնական լուսավորում,
- 8) ՍՆԻՊ 2.09.04-87 Ադմինիստրատիվ և կենցաղային շենքեր:

III. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

6. Սույն կանոնների հավաքածույում կիրառված են հետևյալ հասկացությունները՝ համապատասխան սահմանումներով.

- 1) **անտրոպոմետրիկ հարաչափեր**՝ մարդու մարմնի և նրա մասերի չափման համակարգ,
- 2) **անցում**՝ հետիոտն տարածություն կոնստրուկտիվ և /կամ/ գործառական տարրերի /սարքավորումների/ միջև:
- 3) **բռնածող**՝ սանդուղքի կամ թեքահարթակի բաղադրիչ, որը ուղղորդում և ձեռքի բարձրությամբ ապահովում է հենում շարժման ընթացքում: Բռնածողը կարող է լինել արգելապատի վերին գիծը,
- 4) **գոտիների և տարածության հարաչափեր**՝ հատակագծում կամ տարածության մեջ որևէ սահմանների միջև չափերը բնութագրող մեծությունների թվային նշանակություն (երկարություն, լայնություն, բարձրություն): Օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձի կողմից զբաղեցրած գոտու երկարություն և լայնություն, թիկնաթոռ-սայլակի շրջադարձի շառավիղ, հասանելիության գոտու բարձրություն և այլն,
- 5) **գործառական գոտի**՝ քաղաքաշինական համակարգի տարածքային տարր, որը բնութագրվում է դրա վրա տեղադրված նույնատիպ քաղաքաշինական կամ բնական բաղադրիչներով,
- 6) **դռան բացվածք**՝ դռան համար նախատեսված բացվածք պատի կամ միջնորմի մեջ,
- 7) **եզրաչափք**՝ առարկայի կամ շինության մասերի բացվածքի սահմանային եզրագիծ,
- 8) **թեքահարթակ**՝ շենքի մեջ կամ շենքից դուրս ուղղաձիգ հաղորդակցության թեք հարթություն,
- 9) **Էրգոնոմետրիկ հարաչափեր**՝ մարդու չափերը շարժման կամ որևէ գործունեության պայմաններում,
- 10) **պիկտոգրամմա**՝ գործունեության տեսակի խորհրդանշական պատկեր, գործողության հրահանգ կամ սենքի նշանակություն,
- 11) **տակտիլ**՝ ռելիեֆի շոշափողական զգացողություն,
- 12) **տակտիլային վերգետնյա ցուցիչներ**՝ տեղեկատվության արտացոլման միջոցներ իրենից ներկայացնող որոշակի նկարներով և գույնով ռելիեֆային շերտ (գոգավորություն), որը թույլ է տալիս տեսողական խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձին կողմնորոշվել տարածության մեջ ոտնաթաթի շոշափման միջոցով, ձեռնափայտով կամ մնացորդային տեսողության միջոցով,
- 13) **փարոսիկներ**՝ լուսային կամ ձայնային կողմնորոշիչներ՝ աշխատող բաբախող կամ ընդհատուն ռեժիմներով,
- 14) **Ֆակտուրա(մակատեք)**՝ մակերևույթի արտաքին տեսքը բնորոշող մշակման բնույթ,
- 15) **խելամիտ հարմարեցումներ (շտկումներ)**՝ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության և ուսուցման, աշխատանքի, հաղորդակցման, մշակութային, մարզական

գործունեության և այլ մասնակցության ձևերի ապահովմանն ու դրանց կազմակերպմանը նպաստող պայմաններ և հարմարեցումներ, որոնք ստեղծվում են հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձի անհատական կարիքները:

IV. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7. Կանոնների հավաքածուում տրվում են ճարտարապետական լուծումների, նախագծային միջոցառումների կազմի ընտրություն: Դրանց իրականացումը սահմանվում են նախագծային առաջադրանքով, ինչպես նաև նախագծման ընթացքում:

8. Նորմատիվ փաստաթղթի դրույթները թույլատրում են նախագծային լուծումների տարբերակների ընտրության հնարավորություն՝ ելնելով նախագծվող կամ վերակառուցվող օբյեկտին ներկայացվող հասանելիության և տեղաշարժվելու դժվարություն ունեցող անձանց կողմից դրանց օգտագործման նկատմամբ համալիր պահանջներից:

9. Բնակչության տեղաշարժվելու դժվարություն ունեցող խմբերը ներառում են.

1) հենաշարժային ապարատի խանգարում ունեցող հաշմանդամություն ունեցող անձինք /ներառյալ թիկնաթոռ-սայլակ օգտագործող հաշմանդամություն ունեցող անձինք/,

2) տեսողության և լսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձինք,

3) տարեց անձինք,

4) ժամանակավոր անաշխատունակները,

5) հղի կանայք,

6) մանկական սայլակներով անձինք,

7) նախադպրոցական տարիքի երեխաները:

10. Բնակչության տեղաշարժվելու դժվարություն ունեցող խմբերի համար մատչելի օբյեկտների նախագծման ժամանակ անհրաժեշտ է ապահովել.

1) հաճախման վայրերի հասանելիությունը և շենքի կամ շինության ներսում տեղաշարժման անարգելիությունը,

2) շարժման ուղիների (այդ թվում տարահանման), ինչպես նաև բնակելի, սպասարկման և աշխատատեղերի անվտանգությունը,

3) տարածության մեջ կողմնորոշվելու, սարքավորումներից, ծառայություններից օգտվելու, աշխատանքային և ուսումնական գործընթացներին մասնակցելու հնարավորություն ընձեռող լիարժեք տեղեկատվության տրամադրումը,

4) կենսագործունեության միջավայրի հարմարությունը և հարմարավետությունը (կոմֆորտը):

11. Եթե շենքերի և շինությունների (այդ թվում պատմության և մշակույթի հուշարձանների, ինչպես նաև դրանց հարող տարածքների) վերակառուցման, հիմնանորոգման և հարմարեցման դեպքում մատչելիության պահանջները հնարավոր չէ ամբողջ ծավալով կատարել, ապա հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին Կոնվենցիային համապատասխան հարկավոր է հետևել «խելամիտ հարմարվելու» սկզբունքին:

12. Օբյեկտի ճարտարապետական լուծումները պետք է օգնեն բնակչության տեղաշարժվելու դժվարություն ունեցող խմբերին ճանաչել շենքի, շինության, սենքի տեղամասի գոտու նշանակությունը, գտնել և օգտագործել հաղորդակցության ուղիները ու մուտքերը, այդ թվում տարահանման դեպքում, ժամանակին կողմնորոշվել և խուսափել ռիսկային գոտիներից:

13. Շենքերի և շինությունների հատակագծային լուծումները, այդ թվում հաղորդակցողիները, պետք է հաշվի առնեն հաշմանդամություն ունեցող անձի թիկնաթոռ-սայլակի հարաչափերը համաձայն 1-ին գծապատկերի:

14. Կանոնների հավաքածուի պայմանները տարածվում են բոլոր օբյեկտների վրա՝ անկախ դրանց սեփականության ձևերից:

V. ԳՈՏԻՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՉԱՓԵՐԸ


V.1 Թիկնաթոռ սայլակով հաշմանդամություն ունեցող անձանց համար հիմնական գործառական գոտիները

15. Շենքերի և շինությունների նախագծման ընթացքում, որտեղ հաշվի են առնվում հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորությունները՝ թիկնաթոռ-սայլակի օգնությամբ տեղաշարժվող մարդու չափերը ըստ 1-ին, 2-րդ և 3-րդ գծապատկերների հանդիսանում է որոշիչ տարրերից մեկը:


16. Հիմնական գործառական գոտիների, միջանցքների, սանդղահարթակների, անցախուղների լայնության և այլնի **եզրաչափքի** որոշման համար անհրաժեշտ է հաշվի առնել թիկնաթոռ-սայլակի պտույտի չափերը ըստ 4-րդ գծապատկերի:

17. Թիկնաթոռ-սայլակով հաշմանդամություն ունեցող անձի 90-180° ինքնուրույն շրջադարձի գոտու տրամագիծը պետք է ընդունել ոչ պակաս 1,4 մ ըստ 4-րդ գծապատկերի:

18. Թիկնաթոռ-սայլակներից օգտվող անձանց համար կահույքի և սարքավորումների նախագծման ընթացքում անհրաժեշտ է ղեկավարվել Էրգոնոմետրիկ հարաչափերով՝ համաձայն 14 և 15-րդ գծապատկերների:




ա. Արական սեռի համար




բ. Իգական սեռի համար


Գծապատկեր 1. Թիկնաթոռ-սայլակի հարաչափերը




Ա. Թիկնաթոռ - սայլակի տեղորոշման գոտին




Բ. Թիկնաթոռ - սայլակի չափը




Գ. Սայլակավորի էրգոնոմիկական հարաչափերը



Պծապատկեր 2. Մեծահասակների թիկնաթոռ-սայլակների հարաչափերը




Գծապատկեր 3. Դպրոցականների թիկնաթոռ-սայլակների հարաչափերը





Ա. սայլակի՝ 90° շրջադարձի գոտի

Բ. սայլակի՝ 180° շրջադարձի գոտի





Գ. սայլակի՝ 360° շրջադարձի գոտի




- Սայլակի ելակետային դիրքը
- Սայլակի դիրքը շրջադարձի ընթացքում
- Շրջադարձի ուղղությունը
- Շրջադարձի գոտու սահմանը
- փակագծում տրված են դպրոցականների թիկնաթոռ - սայլակի չափերը






Թիկնաթոռ-սայլակի 180° շրջադարձի համար անհրաժեշտ տարածություն




Գծապատկերներ 4. Թիկնաթոռ-սայլակի պտույտի և շրջադարձի չափերը




Գծապատկեր 5. Սայլակ օգտագործող տղամարդ հաշմանդամություն ունեցող անձանց գործառական գոտիները




Գծապատկեր 6. Սայլակ օգտագործող կին հաշմանդամություն ունեցող անձանց գործառական գոտիները





Գծապատկեր 7. Հասանելիության հարաչափերը ճակատային մոտեցմամբ




Ա - քայլահեռակներ





Բ - մեխանիկական թիկնաթոռ - սայլակներ




Գ - էլեկտրական թիկնաթոռ - սայլակներ



Գծապատկեր 8. Հաշմանդամություն ունեցող անձանց շարժման գոտու հարաչափերը






Գծապատկերներ 9. Հասանելիության հարաչափերը սպասարկման տեղում


V.2 Չափերը և Երգոնոմետրիկ հարաչափերը լրացուցիչ հենարաններ օգտագործող հաշմանդամություն ունեցող անձանց համար

19. Լրացուցիչ հենարաններ օգտագործող հաշմանդամություն ունեցող անձը կանգնած և նստած դրությամբ զբաղեցնում է առողջ մարդու չափերի համեմատ առավել ընդարձակ մակերես:

20. Տարբեր սենյերում գործառական գոտիների մակերեսների որոշման համար հարկավոր է հաշվի առնել լրացուցիչ հենարաններ օգտագործող մարդու չափերը համաձայն 10-րդ գծապատկերի:




Ա - տեսք կողքից Բ - տեսք վերևից
 1 - հաշմանդամություն ունեցող անձանց հանդիսալի ն շարքում տեղակայելու դեպքում
 2 - հաշմանդամություն ունեցող անձանց սեղանի շուրջ տեղակայելու դեպքում
 3 - հաշմանդամություն ունեցող անձանց անցումը նստած մարդու կողքով



Ա - տեսք կողքից Բ - տեսք վերևից
 1 - լոգարանի մոտ 2 - մահճակալի մոտ 3 - վազարանի մոտ 4 - պահարանի մոտ

Գծապատկեր 10. Լրացուցիչ հենարաններ օգտագործող հաշմանդամություն ունեցող անձանց հիմնական գործառական գոտիների հարաչափերը




Գծապատկեր 11. Գործառական գոտիների հարաչափերը

V.3 Չափերը և Էրգոնոմետրիկ հարաչափերը տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար


21. Տեսողական խնդիրներ ունեցող անձիք կարող են տեղաշարժվել ուղեցույց շան կամ ձեռնափայտի օգնությամբ: Առաջին դեպքում մարդը զբաղեցնում է 0,8x1,3 մ, երկրորդ դեպքում ձեռնափայտը դուրս է գալիս քայլող մարդու մարմնի եզրաչափից 0,2մ կողքերից և 0,8մ առջևից ըստ 12-րդ գծապատկերի:

22.Տեսողական խնդիրներ ունեցող անձիք շենքերում պատերի, կահույքի և սարքավորումների երկարությամբ շարժվելիս կողմնորոշվում են հպման միջոցով, ինչպես նաև բազրիքների և արգելափակիչների օգնությամբ: Նախագծման ընթացքում պետք է ղեկավարվել տեսողական խնդիրներ ունեցող անձանց ելակետային չափերով ըստ 12 և 13-րդ գծապատկերների:




*) Հաշմանդամություն ունեցող երեխաների շարժման ուղու չափերը


Գծապատկեր 12. Տեսողական խնդիրներ ունեցող անձանց չափերը և Էրգոնոմետրիկ հարաչափերը




Ա, Բ - պատին գուգահեռ ուղղաձիգ արգելքների թույլատրելի հարաչափերը



Գ - տարբերակող ելուստի հարաչափերը



Դ - հենարանին ամրացված առարկայի թույլատրելի հարաչափերը




Ե - գործառական գոտու հարաչափերը


Գծապատկեր 13. Տեսողական խնդիրներ ունեցող անձանց չափերը և Էրգոնոմետրիկ հարաչափերը

V.4 Էրգոնոմետրիկ հարաչափերը ծերերի համար

23. Տեղաշարժվելու դժվարություն ունեցող բնակչության համար շենքերի և շինությունների նախագծման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել ծեր մարդկանց անտրոպոմետրիկ և Էրգոնոմետրիկ հարաչափերը և իրականացնել ըստ 14-րդ գծապատկերի:




1 - մարդու ընդհանուր չափերը «կանգնած» վիճակում



2 - հասանելիության գոտին

3 - օպտիմալ տեսանելիության գոտի



4 - Ընդհանուր չափերը «նստած» վիճակում


Գծապատկեր 14. Էրգոնոմետրիկ հարաչափերը ծերերի համար

V.5 Հենաշարժային ապարատի խանգարում ունեցող անձանց շարժման Էրգոնոմետրիկ հարաչափերը


24.Նախագծման ընթացքում թիկնաթոռ-սայլակների մեկ ուղղությամբ շարժման դեպքում անցումի գոտու լայնությունը պետք է լինի ոչ պակաս 1,2 մետրից, հանդիպակաց շարժման դեպքում ոչ պակաս 1,8 մետրից՝ հաշվի առնելով թիկնաթոռ-սայլակների չափը՝ գործող նորմատիվ փաստաթղթերի համաձայն: Սայլակ օգտագործող հաշմանդամություն ունեցող անձի և բեռով մարդու կամ մանկական սայլակի մեկ ուղղությամբ շարժման դեպքում անցումի գոտու լայնությունն անհրաժեշտ է ընդունել 1,5 մետր ըստ 15-րդ գծապատկերի:

Անցումի տեղական նեղացման դեպքում դրա լայնությունը կարող է պակասեցվել մինչև 0,85 մետր:


25. Օժանդակող տարրեր միջոցներով (ձեռնափայտեր, հենակներ, քայլահենակներ և այլ) շարժման դեպքում մարդու անցման գոտու լայնությունը տատանվում է 0,7-0,95 մ կախված հենակի տեսակից: Օրինակները տրված են 1-ին հավելվածի 1-ին սկարում:



Ա - միակողմանի շարժման դեպքում




Բ - երկկողմանի (հանդիպակաց) շարժման դեպքում



Գ - թիկնաթոռ - սայլակների երկկողմանի շարժման դեպքում

Գծապատկեր 15. Հենաշարժային ապարատի խանգարում ունեցող անձանց շարժման էրգոնոմետրիկ հարաչափերը



Ա - առանց լրացուցիչ հենարանի Բ - մեկ ձեռնափայտով Գ - երկու ձեռնափայտով
 Դ - երկու «արմունկային» հենակով Ե - երկու հենակով Զ - հենման հարմարանքով

Գծապատկեր 16. Հենաշարժային ապարատի խանգարում ունեցող անձանց շարժման գոտիների հարաչափերը


VI. ԲԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԴԱՅԱՆՋՆԵՐԸ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԿԱՅՐՈՒՄ

26. Բնակավայրերի հատակագծման և կառուցապատման նախագծերի մշակման ժամանակ պետք է իրականացնել քաղաքային միջավայրում հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության տեղաշարժվելու դժվարություն ունեցող խմբերի լիարժեք կենսագործունեության համար մատչելի պայմաններ՝ ապահովելով ՀՀՇՆ 30-01 շինարարական նորմերի XI բաժնի պահանջները:

VI.1 Հետիոտն ուղիներ


27. Քաղաքաշինական միջավայրում հետիոտն ուղիների և անցումների նախագծերն անհրաժեշտ է մշակել համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01 շինարարական նորմերի պահանջների:

28. Քաղաքաշինական միջավայրում հետիոտն ուղիների և անցումների հարաչափերը տրված են 17-ից մինչև 21-րդ գծապատկերներում, ինչպես նաև դրանց կազմակերպման օրինակները տրված են 1-ին հավելվածի 2-րդ և 3-րդ նկարներում:





Լայնական թեքությունը չպետք է գերազանցի 3%

Գծապատկեր 17. Մայրթերի և ճանապարհների չափերը




*. Թույլատրվում է թեքությունը ավելացնել մինչև 1:10 (10%) նեղվածության պայմաններում


Գծապատկեր 18. Անցում մայրից դեպի փողոցի երթևեկի մաս







ԱՆԹՈՒՅՆԱՏՐԵԼԻ Է




ԱՆԹՈՒՅՆԱՏՐԵԼԻ Է




ԱՆԹՈՒՅՆԱՏՐԵԼԻ Է







Գծապատկեր 19. Հետիոտն անցումների սարքավորումները



1 - լուսացույց ձայնային փարոսով 2 - անվտանգության կղզյակ
3 - ռեխեֆային ծածկույթով մայթի հատված



Գծապատկեր 20. Կարգավորվող անցումների սարքավորումը հաշմանդամություն ունեցող անձանց համար




Գծապատկեր 21. Հետիոտն անցումների սարքավորումը ազդանշանային միջոցներով

VI.2 Ստորգետնյա և վերգետնյա հետիոտն անցումներ

29. Տեղամասերում ստորգետնյա և վերգետնյա անցումների առկայության դեպքում, դրանք անհրաժեշտ է կրկնօրինակել / дублировать / և սարքավորել թեքահարթակներով կամ վերամբարձ սարքվածքներով համաձայն 22-րդ գծապատկերի, եթե տեղաշարժվելու դժվարություն ունեցող անձանց համար հնարավոր չէ կազմակերպել գետներես անցումներ: Օրինակները տրված են 1-ին հավելվածի 4,5 և 6-րդ նկարներում:

30. Սանդուղքների և թեքահարթակների հարաչափերը պետք է իրականացնել ՀՀԾՆ IV-11.07.01 շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

31. Անցումների մոտ հարկավոր է տեղադրել հստակ տարբերակվող տեղեկատվական նշաններ:



Գծապատկեր 22. Ստորգետնյա անցումների թեքահարթակներ

VI.3 Ավտոկայանատեղեր անձնական տրանսպորտի

32. Հաշմանդամություն ունեցող անձանց անձնական ավտոտրանսպորտի համար հատկացված տեղերի քանակը և հեռավորությունը հասարակական ու բնակելի շենքերի մուտքերից հարկավոր է իրականացնել համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01 պահանջների:

33.Տրանսպորտային հաղորդակցուղու երկարությամբ հատուկ ավտոկայանատեղերը թույլատրվում է նախատեսել ճանապարհի 1:50 ոչ ավել թեքության դեպքում:

34. Եզրաքարերին զուգահեռ տեղակայված կայանատեղերի չափերը պետք է ապահովեն մոտեցում ավտոմեքենայի հետին մասին՝ թեքահարթակից կամ ամբարձիչ սարքավորանքից օգտվելու համար ըստ 23 և 24-րդ գծապատկերների: Օրինակները տրված են 1-ին հավելվածի 6-րդ նկարում:

35.Ավտոմեքենաների կայանատեղերի համար նշարկումը անհրաժեշտ է նախատեսել 6,0x3,6մ չափերով, որը հնարավորություն կտա մեքենայի կողքերին և հետևից ստեղծել 1,2մ անվտանգ գոտի ըստ 24-րդ գծապատկերի:


36.Եթե կայանատեղերում նախատեսվում է տեղեր թիկնաթոռ-սայլակ օգտագործող հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված սրահներով ավտոմեքենաների կանոնավոր կայանման համար, ապա ավտոմեքենայի կողային մոտեցումների լայնությունը պետք է լինի ոչ պակաս 2,5մ:

37. Բազմահարկ ավտոկայանատեղերում թիկնաթոռ-սայլակ օգտագործող հաշմանդամություն ունեցող անձանց համար ավտոմեքենաների տեղերը պետք է տեղակայվեն առաջին հարկի մուտքին կամ վերելակին մոտ:


38.Բազմահարկ ավտոկայանատեղերի յուրաքանչյուր հարկում պետք է տեղադրվեն դեպի տոմսերի ավտոմատներ, վերելակներ և այլ օբյեկտներ շարժման ուղիները ցույց տվող տեղեկատվական մոնիտորներ, ցուցանակներ:

39. Ներկառուցված և ստորգետնյա ավտոկայանատեղերը պետք է ունենան անմիջական կապ շենքի գործառական հարկի հետ վերելակի միջոցով հաշվի առնելով ՀՀԾՆ IV-11.03.03 շինարարական նորմերի պահանջները, այդ թվում հարմարեցված ուղեկցողի հետ թիկնաթոռ-սայլակ օգտագործող հաշմանդամություն ունեցող անձի համար: Այդ վերելակները և դրանց մոտեցումները պետք է ընդգծվեն հատուկ նշաններով:


Հաշմանդամություն ունեցող անձանց ավտոմեքենաների կանգնատեղի գոտու չափերը




Հաշմանդամություն ունեցող անձանց կողմից վարվող ավտոմեքենաների կայանման տեղի նշարկումը




Հաշմանդամություն ունեցող անձանց ավտոմեքենայի տեղի կազմակերպումը մայթի երկայնքով /գրպանում/




Գծապատկեր 23. Ավտոկայանատեղեր հաշմանդամություն ունեցող անձանց ավտոմեքենաների համար



Մայթի երկայնքով /գրպանում/ հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտի համար տեղի կազմակերպում



Գծապատկեր 24. Հաշմանդամություն ունեցող անձանց ավտոմեքենաների կայանատեղի գոտու չափերը




Գծապատկեր 25. Բաց անհատական ավտոկայանատեղ և ցուցանակ հաշմանդամություն ունեցող անձանց ավտոտրանսպորտի համար

VI.4 Հասարակական տրանսպորտի կանգառներ

40. Հասարակական տրանսպորտի միջոցների կանգառման հարթակները, դրանց հեռավորությունը, մոտեցումները և սարքավորումը անհրաժեշտ է նախատեսել համաձայն ՅՅՇՆ IV-11.07.01 պահանջների:

41. Հենաշարժային ապարատի խանգարում, տեսողության և լսողության խնդիր ունեցող անձանց արտաքին (միջքաղաքային) տրանսպորտից օգտվելու հնարավորության ապահովման համար բոլոր կանգառները պետք է սարքավորվեն հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտային միջոցներ մուտք գործելու համար համապատասխան հարմարանքներով և անհրաժեշտ տեղեկատվությամբ ըստ 26-րդ գծապատկերի: Օրինակը տրված է 1-ին հավելվածի 7-րդ նկարում:

42. Քաղաքային հասարակական տրանսպորտի բոլոր միջոցների, տաքսիների կանգառները պետք է ապահովեն թիկնաթոռ-սայլակներից օգտվող ուղևորների մուտքի և ելքի հնարավորությունը: Կանգառները պետք է սարքավորվեն տրանսպորտային երթուղիների և հնարավոր արգելքների մասին լավ ընթերցվող, այդ թվում տեսողության խնդիր ունեցող անձանց համար Բրայլի այբուբենով տեղեկատվությամբ:




Գծապատկեր 26. Հասարակական տրանսպորտի կանգառ

VI.5 Ավտոկայանատեղեր

43. Նոր քաղաքների և բնակելի շրջանների նախագծման դեպքում հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված շենքերում ավտոկայանատեղերը նպատակահարմար է տեղակայել ստորգետնյա հարկերում ըստ ՀՀՇՆ IV-11.03.03 շինարարական նորմերի՝ անցուղիները հիմնականում կազմակերպելով շենքերի եզրային պատերի կողմից: Պետք է ապահովվի հարմար մոտեցում հաշմանդամություն ունեցող անձի բնակարանից:

44. Միկրոշրջանի տարածքում բնակվող բոլոր հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ է նախատեսել ավտոկայանատեղեր ունենալու հնարավորություն: Այդ ավտոկայանատեղերը կարող են լինել բոքսային տեսակի և գտնվեն բնակելի շենքի մուտքից ոչ ավել 50-100մ շառավղով հետիոտն մոտեցման հեռավորության վրա:

45. Ավտոկայանատեղերի հանձնարարելի չափերն են 6,0-6,5x3,5-3,9մ ըստ 23-րդ գծապատկերի:



Գծապատկեր 26. Բոքսեր հաշմանդամություն ունեցող անձանց ավտոմեքենաների համար


VI. 6 Քաղաքային միջավայրի տարրեր. Հարթակներ հանգստի համար

46. Առևտրա-հասարակական կենտրոններում, առևտրական (հետիոտն) փողոցներում, հասարակական տրանսպորտի կանգառների մոտ, հոտիոտն ուղիներում և զբոսայգիների զբոսանքի երթուղիներում, ինչպես նաև բնակելի զանգվածների հանգստի գոտիներում հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է նախատեսել հանգստի համար համապատասխան հարթակներ ըստ 27-րդ գծապատկերի:

47. Հարթակը պետք է տեղաբաշխել հավասարաչափ, իրարից 100-200մ հեռավորության վրա: Դրանք չպետք է խանգարեն հետիոտն շարժմանը:

48. Հանգստի հարթակի կազմում պետք է նախատեսել նստարան և թիկնաթոռ-սայլակի տեղ: Նստարանը պետք է լինի թիկնակով: Հանգստի տեղի մի մասը հանձնարարվում է նախատեսել ծածկով, որպեսզի հնարավոր լինի օգտվել նաև վատ եղանակին:

49. Նստարանի բոլոր ելուստները հարկավոր է ներկել շրջակա միջավայրից ցայտունությամբ առանձնացող գույներով: Հանձնարարվում է վառ-դեղին գույնը:




Գծապատկեր 27. Հանգստի հարթակներ հաշմանդամություն ունեցող անձանց համար


VI.7 Ուղեկցող ծառայություններ, տեղեկատվություն

50. Հաշմանդամություն ունեցող անձանց պետք է ապահովել հասարակական սպասարկման ուղեկցող ծառայությունների հնարավորություններով, այդ թվում առանց անձնական ավտոտրանսպորտից դուրս գալու: Դրա համար հասարակական կենտրոններում հատուկ առանձնացված հարթակներում, հագեցած հեռվից հստակ դիտարկվող ցուցանակներով, հարկավոր է տեղադրել տարբեր ավտոմատ սարքեր՝ միջանկյալ մանր առևտրի համար, ըմպելիքի, դրամի փոխանակման, տեղեկատվության տրամադրման, ուղեկցող սննդի և այլնի համար:


51. Տեղեկատվական կրպակների, առևտրական ավտոմատների, հեռախոս-ավտոմատների և սպասարկման այլ տեսակների աշխատանքային մակերևույթները հարկավոր է նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի 0,8-ից մինչև 1,1մ բարձրության վրա ըստ 28 և 29-րդ գծապատկերների:



Տումարկղ




Դրամարկղ հինքնասպասարկման ձեռնարկությունում



Ինքնասպասարկում ճակատային (Ս) և կողային (Բ) մոտեցումներով



- 1 - անձեռոցիկներ 2 - բաժակներ 3 - կառավարման կոճակներ
4 - բուտերբրոտների, ըմպելիքի, սպրանքների ավտոմատներ

Գծապատկեր 28. Դրամարկղներ, առևտրական ավտոմատներ



Բաց հեռախոս-ավտոմատ

(I)- կողային մոտեցում ապարատին (II)- ճակատային մոտեցում ապարատին



- 1 - հեռախոսի ապարատ
- 2 - հեռախոսի խցիկ
- 3 - թիկնաթոռ-սայլակի մոտեցման գոտի
- 4 - հատուկ կանչերի հեռախոսների ցուցակ և այլ տեղեկատվություն
- 5 - հեռախոսային տեղեկատուի տեղադրման դարակ
- 6 - ծալովի նստատեղ
- 7 - հենակի կամ ձեռնափայտի համար կախիչ
- 8 - ռեկեֆային շերտ

Հեռախոս-ավտոմատի անկյունային տեղակայում

Հեռախոսային խցիք

Գծապատկեր 29. Հեռախոս-ավտոմատների /տաքսոֆոնի/ տեղադրումը Սայլակ օգտագործող անձանց օգտագործման համար

52.Հաշմանդամություն ունեցող անձանց կողմից օգտագործվող տեղեկատվական միջոցներին վերաբերում են.

- 1) ռեկեֆային, ֆակտուրային հողամասերում, մայթերում և հետիոտն անցումներում ուղիների տակտիլային մակերևույթների այլ տեսակները,
- 2) արգելապատումը վտանգավոր հատվածներում,
- 3) հողամասերում շարժման ուղիների նշագծումը և ճանապարհային երթևեկության նշանները, ցուցանակները,

4) տեղեկատվական սարքավորանքները՝ ստենդները, վահանակները և ծավալային գովազդային սարքավորանքները,

5) լուսացույցերը և լուսային ցուցանակները, շարժման ազդանշանների ձայնային կրկնակման սարքավորանքները:

53. Հետիոտն ուղիների ծածկույթի գույնը հանձնարարվում է կատարել առանձնացող երթևեկելի մասի ծածկույթի գույնից: Շարժման ուղիների նշագծումը հանձնարարվում է իրականացնել տրանսպորտի համար՝ սպիտակ գույնով, հետիոտնի և թիկնաթոռ-սայլակ օգտագործող հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ դեղին: Մոտոսայլակներից օգտվող հաշմանդամություն ունեցող անձանց համար նշագծումը հետիոտն ուղիների վրա կատարվում է սպիտակ գույնով: Առանցքային շերտերի նշագծումը հանձնարարվում է կատարել գծիկավոր գծերով, իսկ եզրաշերտերինը՝ հոծ գծերով:

54. Շարժման ուղիների վրա տակտիլային ցուցանակները հանձնարարվում է տեղակայել.

- 1) շենքերի և շինությունների արտաքին, ուռուցիկ անկյուններում,
- 2) սյուների և արգելափակիչների վրա,
- 3) ապրանքների և ըմպելիքների վաճառքի ավտոմատների լծակների վրա,
- 4) տաքսոֆոնների խցիկների վրա:

55. Հողամասերում տեղեկատվական հանգույցների ձևավորման դեպքում հանձնարարվում է սպասման գոտում տեսողական տեղեկատվությունը կրկնակել տակտիլայինով ըստ 37-րդ գծապատկերի: Օրինակները տրված են 1-ին հավելվածի 8-րդ նկարում:

56. Հողամասերում լանդշաֆտային և ֆիթոդիզայնի կոմպոզիցիաները պետք է կատարեն սպասարկման օբյեկտի ընդհանուր տեղեկատվական համակարգի մեջ մտնող ճարտարապետական շեշտադրական գործառույթներ: Այս դեպքում հանձնարարվում է օգտագործել նշարկման գոտիների կամ նույն նշանակությամբ գործառույթների տեղերի առանձնացման նույնանման կամ միասնական մոտեցումներ:

VI.8 Տակտիլային վերգետնյա ցուցանակներ տեսողական խնդիր ունեցող անձանց համար

57. Ցուցանակները, տեղադրման տեղից կախված, բաժանվում են հետևյալ ձևերի.

- 1) ճանապարհային,
- 2) հատակային:

58. Ցուցանակները, կախված նշանակությունից, բաժանվում են հետևյալ ձևերի.

- 1) նախազգուշացնող,
- 2) ուղղորդող:

59. Տակտիլային սալիկը վերգետնյա տակտիլային ցուցանակ է, որը թույլ է տալիս կազմակերպել անարգել միջավայր տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար: Այն վատ տեսող և տեսողության խնդիր ունեցող անձանց տալիս է ինքուրույն կողմնորոշվելու հնարավորություն տարածության մեջ, օգնում է նրանց համար շատ օբյեկտներ դարձնել մատչելի: Տակտիլային սալիկը տալիս է տեղեկատվություն շարժման երթուղիների մասին, նախազգուշացնում է արգելքների և սահմանափակումների մասին:

60. Տակտիլային սալիկները լինում են երկու տեսակի.

- 1) շարժման ուղղությունների մասին տեղեկացնող,
- 2) ուղիներում արգելքների մասին նախազգուշացնող:

61. Ուղղորդող տակտիլային սալիկներն ունեն երկայնական կամ անկյունագծային ակոսներ, որոնք հաղորդում են շարժման ուղղության և աջ կամ ձախ շրջադարձի մասին և տրված են 1-ին աղյուսակում:





Աղյուսակ 1. Տակտիլային սալիկների տեսակները


h/h	Ակոսի ձևը	Չարաչափերը
1.	Երկայնական ակոսով	
2.	Կոնաձև ակոսով	
3.	Քառակուսի ակոսով	
4.	Անկյունագծային ակոսով (ձախ անկյունագիծ)	

62. Նախագգուշացնող տակտիլային սալիկները կարող են ունենալ կոնաձև ակոսներ, որոնք ցույց են տալիս վերգետնյա անցումի կամ սանդուղքի եզրային աստիճանի առկայությունը և քառակուսի ակոսներ, որոնք զգուշացնում են արգելքների մասին: Չատուկ ձեռնափայտի օգնությամբ տեսողության սահմանափակում ունեցող մարդիկ հեշտությամբ կարող են կողմնորոշվել տարածության մեջ:

63. Տակտիլային ճանապարհային ցուցանակների նշանակությունը, չափերը ակոսների ձևը և տեղադրումը տրված են 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2. Տակտիլային ճանապարհային ցուցանակների նշանակությունը, չափերը, ակոսների ձևը և տեղադրումը

N	Նշանակությունը	Չափերը	Ակոսի ձևը	Տեղադրումը
1	2	3	4	5
1.	Ուշադրություն, ստորգետնյա անցում է	Անցումի սկզբի առջև մայթի վրա 500մմ կամ 600մմ լայնությամբ և անցումի լայնությանը հավասար երկարությամբ տեղադրված շերտ	Կոնաձև կոսով 	Սանդուղքի առաջին աստիճանի կողքովից 800մմ հեռավորության վրա
2.	Ուշադրություն, վերգետնյա անցում է	Անցումի սկզբի առջև մայթի վրա 500մմ կամ 600մմ լայնությամբ և անցումի լայնությանը հավասար երկարությամբ տեղադրված շերտ	Երկայնական ակոսով 	Սալարկուղու կողքովից 800մմ հեռավորության վրա
3.	Ուշադրություն, վերգետնյա անցում 90° անկյան տակ	Դեպի անցում շրջադարձից առաջ մայթի վրա երկու կողմից 500մմ կամ 600մմ լայնությամբ և անցումի լայնությանը հավասար երկարությամբ տեղադրված երկու շերտ	Անկյունագծային ակոսով 	Անցումի կողքովի շարունակությունը հանդիսացող գծից 800մմ հեռավորության վրա
4.	Ուշադրություն, լուսացույց է	Լուսացույցի կայմի շուրջը տեղադրված քառակուսի, բաղկացած 500մմ կողմ ունեցող 4 սալիկից	Քառակուսի ակոսով 	Կայմը շրջապատող
5.	Ուշադրություն, արգելք է	Արգելքի ուրվագծով տեղադրված 500մմ լայնությամբ շերտ	Քառակուսի ակոսով 	Արգելքից 800մմ հեռավորության վրա
6.	Ուշադրություն, ձախ (աջ) շրջադարձ	Քառակուսի սալիկ 500մմ կողմով	Անկյունագծային ակոսով 	Շրջադարձի տեղում



Գծապատկեր 30. Տեսողական-տակտիլային ցուցանակներ

VII. ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ

64. Մետրոպոլիտենը պետք է ապահովի բոլոր տեսակի ուղևորների անվտանգ և հարմարավետ տեղափոխումը, այդ թվում նաև համապատասխան հաշմանդամություն ունեցող և այլ տեղաշարժվելու դժվարություն ունեցող անձանց, ինչպես նաև մանկական սայլակներով ուղևորների դեպի ենթակառուցվածքների օբյեկտներ մատչելիության ապահովման պահանջները: Դրանք վերաբերվում են մետրոպոլիտենի կայարաններին, դրանց կազմի մեջ մտնող դեպի փողոցներ անցումներին, գևացքի վագոններին:

65. Նկատի ունենալով, որ գործող մետրոպոլիտենի կայարանները հիմնականում վերակառուցումների ճանապարհով հնարավոր չէ հարմարեցնել տեղաշարժվելու դժվարություն ունեցող անձանց մատչելիության ապահովման պայմաններին, նշված պահանջները հիմնականում վերաբերվում են նոր կառուցվելիք օբյեկտների նախագծային և շինարարական աշխատանքներին:

VIII. ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅԱՆՋՆԵՐ

VIII.1 Հողամասեր և տարածքներ

66. Շենքի, շինության կամ շենքերի համալիրի տեղամասի նախագծման դեպքում հարկավոր է պահպանել հաշմանդամություն ունեցող և տեղաշարժվելու դժվարություն

ունեցող անձանց դեպի շենք հասանելիությունն ապահովող հետիոտն և տրանսպորտային ուղիների անընդհատությունը:

67.Հողամասերի և դրանց տարրերի նկատմամբ պահանջները տրված են 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3. Հողամասերի և դրանց տարրերի նկատմամբ պահանջները

Օբյեկտ	Հափանիշների պահանջները			
	Մատչելիություն	Անվտանգություն	Տեղեկատվություն	Հարմարավետություն
1	2	3	4	5
1. Հողամասի արգելապատումը		Արգելապատի վտանգավոր բարձրությամբ ելուստային տարրերի բացակայություն: Որպես կենդանի ցանկապատ օգտագործել անվնաս փայտա-թփային տեսակներ:	Արգելապատի միջոցով կողմնորոշման հնարավորության ապահովում: Ճանաչման և նախապես ազդարարման տարրերի ներառում արգելապատի /ցանկապատի/ մեջ:	Ներկառուցված և կցակառուցված հանգստի գոտիների սարքավորում: Կենդանի ցանկապատի երկարությամբ բազրիքի սարքավորում:
2. Հողամասի մուտքեր և ելքեր			Անցումների ճարտարապետական և լուսային /օրվա մուծամանակ/ լուծումներ:	Անցումների մակնանշման և նշահարման առկայություն:
3. Շարժման հետիոտն ուղիներ	Շրջադարձի և հետադարձի հարթակների սարքավորում, այդ թվում շարժման հետիոտնային ուղիների փակուղային տարրերում:	Անցումները չպետք է դուրս գան երթևեկելի մասի վրա: 4) Արգելապատերի, ցանկապատերի և եզրապատերի /այդ թվում կանաչի/ օգտագործումը հողամասում անվտանգ շարժման ուղիներ հայտնաբերելու համար: Շարժման ուղիների տեսադաշտի ապահովում դրանց հատման դեպքում:	Հետիոտն ուղիների ընդգծումը ծածկույթի վրա ոչ պակաս 0,5 մ բարձրությամբ գրանիշերով նշանների, ցուցանակների և նախագգուշական արձանագրերի, ծածկույթի խորդուբորդության և ֆակտուրայի փոփոխության օգնությամբ: Մուտքերի, սպասարկաման և հանգստի տեղերի ու հեռավորության տեղեկատվության ապահովում:	Հանգստի տեղերի առկայություն շարժման ուղիների հատման մոտակայքում, շենքի մուտքի և հողամասի ելքի առաջ: Հաշմանդամություն ունեցող անձանց հետիոտն շարժման ուղիների սարքավորում կողմնորոշման միջոցներով:


<p>4. Հաշմանդամություն ունեցող անձի անհատական ավտոտրանսպորտի կանգնատեղեր</p>		<p>Հետիոտն հաղորդակց- ուղիներին մոտեցում առանց տրանսպորտային երթևեկության հետ հատման: Ռիսկի տեղերի արգելա- փակում և դրանց մասին նախապես տեղեկատվու- թյան միջոցների սարքա- վորում:</p>	<p>Կանգնառների և հասարակական շենքերի վարչակազմի միջև տեղական կապի միջոցների սարքավորում սպասարկող անձնակազմի կանչի համար:</p>	<p>Կանգնատեղերում հաշման- դամություն ունեցող և տեղա- շարժվելու դժվարություն ունեցող անձանց տարբեր տեսակի տեղաշարժման, ինչպես նաև վերականգնողական տեխնիկական միջոցների վարձույթի տեղի ստեղծում: Առողջության խախտմամբ անձանց համար դեպի շենքեր փակ անցումի ստեղծում:</p>
<p>5. Կանաչապատում</p>	<p>Հետիոտն շարժման անցումներին հարող կանաչա- պատ շահագոր- ծվող հարթակների սահմանները չպետք է ունենան 4 սմ ավել նիշերի անկում և եզրաքարեր: Հետիոտն շարժման անցումների հատ- կանիշներով և հարաչափերով գրունտային ճանապարհների /արահետներ/ սարքավորում:</p>	<p>Խաչմերուկներում, վտան- գավոր հատվածներում իրավիճակի գնահատման տեսադաշտը փակող կան- աչապատման բացակայություն: Թափվող բույսերի, անցում- ների մթեցման տպավորու- թյուն ստեղծող ֆիտոդի- գայնի տարրերի, ինչպես նաև տնկիների ելուստային պսակների, բների և ար- մատների բացակայություն: Հողամասի կանաչապատ- ման համար հարկավոր է օգտագործել ոչտրավ- մատիկ փայտա-թփային տեսակներ:</p>	<p>Լանդշաֆտային ճարտարապետության միջոցների կիրառում հետիոտն շարժման անցումների, հանգստի և ուղեկցող սպասարկման տեղերի հայտնաբերման համար: Ծառերի և թփերի գծային տնկման կիրառում հետիոտն շարժման անցումների եզրերի ձևավորման համար: Ազդանշանների, տեղեկատվական սարքերի և վտանգավոր հատվածների կանաչապատումով ստվերման բացակայություն:</p>	<p>Հանգստի կանաչապատ գոտիների ստեղծում առողջարարական ազդեցություն ապահովող տեսակների կիրառումով: Տեղեկատվական ցուցանակների կրկնակման համար ծաղկային գորգերի կիրառում:</p>

<p>6. Բարեկարգման տարրեր, փոքր ձևեր, գովազդ</p>	<p>Թիվնաթոռ-սայլակի բարձրությունից օգտագործել թույլատրող բարեկարգման տարրերի կիրառում: Գովազդի տարրերը և նշանները ամբողջովին չպետք է փակեն շարժման անցումները և հարթակները:</p>	<p>Հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղեկատվության մեջ ոչ միանշանակ մեկնաբանություն ունեցող և սթրեսի վտանգ ստեղծող գրառումների և խորհրդանիշերի բացակայություն: Տեղեկատվության ընկալման խոչընդոտների բացակայություն, այդ թվում գովազդի միջոցներով կուրացման:</p>	<p>Բարեկարգման տարրերի, մուտքերի և գրուցատաղավարների, տաղավարների և պարկային շինությունների տեղակայման լուսավորում կամ լուսային մակնիշավորում օրվա մութ ժամանակ: Խոչընդոտների բացառման համար տարբեր միջոցներով տեղեկատվության ասինխրոնիկ /ոչ միաժամանակյա/ ներկայացում:</p>	<p>Հետիոտն շարժման անցումների հետ բարեկարգման տարրերի համատեղված տեղաբաշխում: Բարեկարգման տարրերի տեղաբաշխում, հաշվի առնելով շահագործման համար նվազագույն քանակով շրջադարձերը: Բարեկարգման տարրերի օգտագործման մոտ հանգստի համար հենարանների /բռնածողերի և այլ/ սարքավորում:</p>
<p>7. Մասնագիտացված հարթակներ /սպասարկման տեղերով/</p>		<p>Հողամասում սպասարկման տեղերի տեղաբաշխում և սարքավորում միանման շենքերում և շինություններում սպասարկման տեղերի անվտանգության պահանջներին:</p>	<p>Հարթակների, ինչպես նաև սպասարկման գոտիների նշանակության և մուտքերի հայտնաբերման համար ճարտարապետական, այդ թվում լանդշաֆտային-ճարտարապետական միջոցների կիրառում:</p>	<p>Մոտեցումների միացում հարթակներին շարժման ամենակարճ ուղիով: Ուղեցույց շնիկների համար հարթակների առկայության դեպքում վանդակի նվազագույն չափը նախատեսել 1,5 մ²:</p>
<p>8. Հանգստի տեղեր և հարթակներ</p>	<p>Շարժման ուղիներից դուրս հանգստի և սպասման տեղերի համատեղված տեղաբաշխում:</p>		<p>Հանգստի տեղերի տեղեկատվական ապահովում:</p>	<p>Գերտաքացումից և տեղումներից պաշտպանվելու համար ամպհովանիների և ծածկարանների կիրառում: Խաղաղ հանգստի տեղերի պաշտպանություն կողմնակի աղմուկից: Հանգստի տեղերից համայնապատկերի, ինչպես նաև լանդշաֆտային ճարտարապետության դեկորատիվ օբյեկտների տեսաընկալման ապահովում:</p>



VIII.2 Մուտքեր և երթևեկության ուղիներ

68. Դեպի շենքերի մուտքեր թիկնաթոռ-սայլակի մուտեցման համար անհրաժեշտ գոտու չափերի, մուտքերի և երթևեկության ուղիների, մուտքերի առաջ հարթակների և նախամուտքի կահավորման, հանգստի գոտիների, մուտքի դռների, միջանցքների և անցումների, լրացուցիչ սարքավորանքների կահավորման նկատմամբ նախագծային լուծումներն իրականացնել ՅՅՇՆ IV-11.07.01 շինարարական նորմերի պահանջներին համապատասխան և ըստ 31-ից մինչև 42-րդ գծապատկերների: Օրինակը տրված է 1-ին հավելվածի 10-րդ նկարում:


69. Մուտքերի և հանգույցների նկատմամբ պահանջները տրված են 4-րդ աղյուսակում:



Գծապատկեր 31. Հետիոտն գոտիների չափերը. Հանգստի հարթակ




Գծապատկեր 32. Արգելքներ շենքին հարող շարժման ուղիների վրա




- դռան բացվածքի ընդլայնում
- 1 - բացվածքի ընդլայնվող մաս
 - 2 - ուժեղացվող հենասյուներ
 - 3 - ուժեղացվող հեծանագուռի


Մուտքային հարթակի վերակառուցման օրինակներ




Գծապատկեր 33. Շենքերի մուտքեր




Ա և Բ - ազատ հարթակի հարաչափերը բացովի փեղկավոր դռան առաջ դրա բացման կողմից




Գ - անցում պտուտակադռնակի միջով



Ազատ տարածության նվազագույն հարաչափերը մուտքից առաջ և հետո ճակատային (Դ) և անկյունային (Ե) մուտքերի դեպքում




Ծխահիներով դռներ




Y=1500 դեպքում X>920 Y=1400 դեպքում X>1070

Ա, Բ, Գ - դռներ առանց կողպեքի





Դ - դռա փակիչով

Ե, Զ - բռնակ և փակիչ ունեցող դռներ




Սահող դռներ


Գծապատկեր 35. Դռների և մերձակա գոտիների չափերը



Գծապատկեր 36. Հարթակներ և անցախուցեր մուտքերի առաջ



Փճապատկեր 37. Մուտքային անցախցեր




Գծապատկեր 38. Մուտքային անցախցերի վերա հատակազման տարբերակներ

Աղյուսակ 4. Մուտքային հանգույցների նկատմամբ պահանջները


Օբյեկտ	Չափանիշների պահանջները			
	Մատչելիություն	Անվտանգություն	Տեղեկատվություն	Հարմարավետություն
1	2	3	4	5
1. Մուտքեր	1) Մուտքի սարքավորում մոտեցման նույն նիշի վրա: 2) Մուտքերի կահավորումը ավտոմատ բացվող դռներով, ինչպես նաև վերելակներով կամ վերհաններով /տարբեր մակարդակներով մուտքերի համար/:	1) Սանդուղքների և թեքահարթակների լուսավորում օրվա մութ ժամերին: 2)Տակտիլ ցուցանակների տեղաբաշխումը անշարժ տարրերի վրա:	1) Ճարտարապետական միջոցներով մուտքերի աստիճանակարգության ընտրումը, եթե այն չի հակասում սախագծի հայեցակարգին: 2) Մուտքերի լուսավորում օրվա մութ ժամերին: 3) Մուտքերի մակնիշավորման սարքավորում, մուտքի ճարտարապետության մեջ նշանների, պիկտոգրամայի /պատկերակի/ կամ ցուցանակների ներառում:	1) Հանգստի տեղերի սարքավորում մուտքից առաջ և հետո: 2) Անցումների շերտի մոտ առողջության խախտմամբ բոլոր անձանց համար հարմար հենարանների սարքավորում: 3) Ինչպես առողջ, այնպես էլ առողջության խախտմամբ անձանց օգտագործման համար հարմար ունիվերսալ ֆուրնիտուրայի /բռնակների և այլ/ կիրառում:
2. Մուտքային հարթակներ և նախամուտքեր	3) Տրանսպորտա-հետիոտն թեքահարթակների վրա հետիոտնի և սայլակ օգտագործող հաշմանդամություն ունեցող անձանց շարժման շերտերի ընդգծում և սարքավորում:	3) Մուտքերի գոտիներում, թեքահարթակների, հարթակների վրա, նախամուտքերում շարժվող հետիոտնի և թիկնաթոռ-սայլակներով	4) Մուտքի առաջ 0,9մ հեռավորության վրա նախագգուշական նշանների կամ տակտիլ և ակուստիկ ցուցանակների տեղանշանների	4) Մուտքերի առաջ բարեկարգման տարրերի և վարչակազմի հետ կապի տեղաբաշխում: 5) Շարժվող տարրերի /Էսկալատորների և տրանսպորտյորների/

	<p>4) Հաճախորդների, ինչպես նաև հետիոտնի և ավտոտրանսպորտային միջոցների հանդիպակաց հոսքերի տարանջատումը բավարարող եզրաչափերի ապահովում:</p> <p>5) Տրանսպորտային անցման շերտի լայնությունը մուտքի մոտ պետք է լինի ոչ պակաս 3,0մ:</p> <p>6) Ավտոկանգնատեղերի տեղանշումը պետք է հաշվի առնի, որ տրանսպորտային միջոցի բաց դռներից մինչև նախամուտքի սյուների խարսխի, ճաղաշարի կամ արգելապատի հիմքերը հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս 0,5 մ:</p> <p>7) Արտաքին մուտքային հարթակների շրջադարձային գոտիների տրամագիծը ոչ պակաս 2,2 մ:</p>	<p>և մեխանիկական սայլակներ օգտագործող հաշմանդամություն ունեցող անձանց շարժման հոսքերի գատում:</p> <p>4) Կորագիծ թեքհարթակների վրա կորագծի ներսի նվազագույն շառավիղը պետք է լինի ոչ պակաս 2,0 մ հետիոտն շարժման դեպքում, 5,0 մ՝ ավտոտրանսպորտի շարժման դեպքում:</p> <p>5) Ավտոտրանսպորտի անցման հնարավորություն ունեցող հարթակների և նախամուտքերի վրա մուտքից մինչև թեքահարթակի քայլ հեռավորությունը պետք է ապահովի տրանսպորտային միջոցի կանգառը ուղու հորիզոնական հատվածում մոտակա դռան բացվածքից 1,0 մ ոչ մոտ՝ բացված դռների հաշվարկով:</p>	<p>սարքավորում /այդ թվում հարթակների և հատակների ալիքածև /խորդուբորո/ ծածկույթների/:</p> <p>5) Մուտքի վրա գոտիների և շարժման ուղիների տեղանշում՝ սպասման /տարանջատման/ գոտիների և շրջադարձային հարթակների առանձնացումով:</p> <p>6) Հարթակների և նախամուտքերի վրա սպասարկման օբյեկտի նշանակության, հատակագծման և աշխատանքի ռեժիմի մասին տեղեկատվությամբ տեղեկատվական սարքավորանքի, ցուցատախտակի, վահանների տեղաբաշխում:</p>	<p>պաշտպանություն մթնոլորտային տեղումներից:</p> <p>6) Տարվա ցուրտ եղանակներին հատակների, հարթակների, թեքհարթակների և սանդուղքների տաքացման սարքավորում:</p> <p>7) Մուտքային հարթակների և սանդուղքների վրա շվաքարանների սարքավորում:</p>
--	---	--	--	---


		<p>6) Երկուսից-երեքկողմանի վայրէջքով սանդուղքները պետք է կահավորել պատի հարթությանը կամ ինքնուրույն հենարանին ամրացված բռնածողերով:</p>		
<p>3. Անցախուց /տամբուր/</p>	<p>8) Անցախի լայնությունը պետք է լինի ոչ պակաս հոտիոտն շարժման շերտի լայնությունից: 9) Տարանջատման /սպասման/ տեղերի առկայությունն ոչ պակաս 0,9 մ լայնությամբ և ոչ պակաս 1,5 մ խորությամբ գրպաններով: 10) Անցախի խորությունը պետք է ընդլայնել անցախի ներս բացվող դռան պաստառի լայնությամբ:</p>	<p>7) Անցախում, ինչպես նաև դրանից 1,5 մ հեռավորության վրա սանդուղքների բացակայություն: 8) Անցախի կահավորման մեջ հայելիների բացառում:</p>	<p>7) Դռներում հարվածադիմացկուն ապակուց թափանցիկ պանելների կիրառում: Պանելի ներքին եզրը ոչ պակաս 0,9մ հատակից: 8) Մուտքի դռների ընդգծումը ֆակտուրայով, գույնով, ճանաչման այլ միջոցներով:</p>	<p>8) Շարժման առանցքային կազմակերպում: 9) Դրենաժի կիրառում /մթնոլորտային խոնավության ավելցուկի վերացում՝ ըստ կլիմայական ցուցանիշների/:</p>




Ա - միափեղկ, սահող



Բ - երկփեղկ, սահող




Գ - միափեղկ, ծխնիներով




Դ - երկփեղկ, ծխնիներով

Գծապատկեր 39. Մուտքի բացվածքի առաջ հարթակների չափերը


Մուտքային հանգույցի լուծում




Դռներ և անցախներ





Գծապատկեր 40. Մուտքերի կազմակերպման տարբերակներ



Փճապատկեր 41. Դռների բացվածքների սարքավորումներ



Ա, Բ - միջանցքների թողունակության ապահովում



Գ - պատին ամրակցված առարկայի անվտանգ տեղաբաշխում



Դ - խորշում առարկայի տեղաբաշխում


Գծապատկեր 42. Արգելքներ միջանցքներում

VIII.3 Սանդուղքներ և թեքահարթակներ



70. Սանդուղքների և թեքահարթակների, դրանց բռնածողերի և բազրիքների սարքավորանքի նախագծերն անհրաժեշտ է մշակել համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01 և ՀՀՇՆ 21-01 շինարարական նորմերի պահանջների:

71. Սանդուղքները պետք է կրկնակվեն թեքահարթակներով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ուղղաձիգ հաղորդակցությունն ապահովող տեխնիկական միջոցներով ըստ 48-ից մինչև 55-րդ գծապատկերների: Օրինակները տրված են 11 և 12-րդ նկարներում:


Վերելք ոչ ավել 1,6 մ բարձրությամբ




Վերելք ոչ պակաս 1,6 մ բարձրությամբ



Կանխարգելում սանդղակի տարածություն անակնկալ հայտնվելուց




Ծաղկանոց կամ բնածող վտանգի գոտում



Կանխարգելիչ պաշտպանություն կամ բնածող վտանգի գոտում



Գծապատկեր 43. Սանդուղքներ




ա. Շենքում

գ. Նիշերի տարբերության դեպքում



բ. Բաց տարածությունում






Գծապատկեր 44. Սանդուղքներ. Կանխարգելիչ միջոցառումներ




Թեքահարթակի
լայնական
թեքությունը 1%




Գծապատկեր 45. Թեքահարթակների հիմնական հարաչափերը




Ա, Բ, Գ - Միջանկյալ թերահարթակներ



Դ, Ե, Զ - Վերջնահարթակներ




